եւ իւրաքանչիւր ազգ, զոր ինչ ունին միանգամ զտեղիս 'ի տեղեաց անտի, մնասցեն անփոփոխ 'ի ձեռս նոցա մինչեւ յաւիտեանս ժամանակաց, որպէս հրամայեալ են Աչրաֆեան Մէլիքքն՝ անխախտ և հաստատուն մնասցեն առ նոսա, և մի հակառակեսցին ընդ միմեանս և մի թշնամանեսցէ մին զմիւսն վասն տեղւոյ եթէ Լատին իցէ եթէ Հայ, և եթէ Վրացի. և զոր ինչ միանգամ ունին 'ի ձեռս իւրեանց 'ի տեղեաց անտի, բնակեսցին խաղաղութեամբ 'ի տեղիս և յեկեղեցիս իւրեանց. Լատինք յեկեղեցիս իւրեանց. նոյնպէս և Վրացիք, որպէս վկայեն հրովարտակք տուեալ երկաքանչիւրոց յառաջին թագաւորաց, զորս իշխանութեամբ հաստատեալ են։ Զգոյշ լերուք չտալ գործել ընդդէմ իրաւանց եւ արդարութեան, մի յափշտակեսցէ ոք զիրաւունս այլոց, և մի հակառակեսցի մին ընդ միւսոյն սակս տեղւոյ եւ ժառանգութեան։ Իսկ բնակիչն 'ի տեղիս 'ի տեղեացն այնոցիկ, որք են վանք Ս. Յակոբայ և Գողգոթայ այլովքն հանդերձ, արդիլեալ է և արգելջիք զայլս յաղգաց և յօտարաց. զի բաց յայլոց, աւանդեալ են նոքա մի միայն մեծապատիւ ազգին Հայոց։ Եւ արդ փոյթ կալջիք եւ մի իւիք զանց արասջիք. զի գործադրութիւն հրովարտակիս օրինակ բարի լիցի այլոց, և յետ այնորիկ մնասցէ 'ի ձեռս Հայոց։

Գրեցաւ հրովարտակս ձեռամբ հաճի Գասրմի, 'ի Է ճէմազիլ ախր ՎՂԹ (1319)։ Դաւիթ եպիսկոպոս Պատրիարգ Ս. Աթոռոյս վախճանեալ թաղի 'ի գաւթի տաճարին Ս. Յակոբայ, որոյ արձանագիրն երեւի ցարդ յաջակողմեան մոյթըս (1321) յոտանաւոր բանս տապանագրին յիշատակին բառգդ «Երջանիկ և Ս. Հեղինակի». այլ թէ որոց իրաց իցէ լեալ հեղինակ, չէ յայտ։